

պաշտօնէն հրատարելով՝ կ'ստանձնէ Նախակրթարանի ուսուցչութիւնը զոր կը շարունակէ ցարդ:

Իր հրատարակած գիրքերն են.

Մարաշի ցարդը 1920 ին, (տպ. Հալէպ, 1927).

Ինթիլի-Այրանի սպանը 1916 ին, (տպ. Երուսաղէմ, 1928):

Ն

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՉԻԳԻԱՆԵԱՆՅ, ԹԻՖԼԻՍՅԻ.— Շրջանաւարտ Բեդրպուրկի Մանկավարժանոցէն. 1892-1893 ին գիտութեանց ուսուցիչ կարգուած է Ժառ. վարժ.ին մէջ և ապա հրատարած:

Պ

ՊԵՏՐՈՍ ԿԻՒՐԵՂԵԱՆ, ԿԵՍՍՐԱՅԻ (Սապահգիւղեան).— Աշկ. Թիֆլիսի Ներսիսեան վարժ.ին. յետոյ կը հետևի Փարիզի Քաղ. գիտութեանց Համալսարանի դասընթացքին. 1890—1892 Ժառ. վարժ.ին մէջ աւանդած է գիտութեանց դասերը. ուսուցչութեան պաշտօն վարած է նաև Ռուսաստանի, Պուլկարիոյ և Հայաստանի մէջ. խմբագիր Երիստարդ Հայասան թերթին: 1928 Ապրիլ 28 ին մեռած է Ամերիկայի մէջ: Ունի հրատարակութիւններ:

Ս

ՍՈՂՈՄՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅԻ.— Ծ. 1860 Ապտ. 10 ին, աշկ. Ժառ. վարժ.ի 1872 ին, շրջանը աւարտելէ վերջ հայերէնի և թուրքերէնի ուսուցիչ կը կարգուի նոյն վարժ.ին մէջ, յետոյ պատրիարքարանի մէջ թուրքերէնի քարտուղարութեան պաշտօնը ստանձնելով՝ երկար տարիներ կը պաշտօնավարէ: Կը վախճանի 1926 Յուլիս 7 ին:

Յ

ՅՐԷՏԷՐԻԿ ՄՈՒՐԱՏ, ՅՈՊՊԵՅԻ.— Ծ. 1858 ին, աւագանի անունը Սողանն, հայրը Յակոբ, մայրը Կասարիկ, հայերէնը կը սորվի իր հօրեղբայր Սրեկոն Մուրաշկն. Գէորգ եղբօրը հետ ա-